ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Լոռի Բերդ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Լոռի Բերդ	Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024թ. հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի	08.11.2024թ.	12:00	**Լոռի Բերդ համայնքապետարան** (գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ փողոց, շենք 7)

ՆԱԽԱԳԻԾ 1

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024թ. հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ նոյեմբերի 08-ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու

2024թ. նոյեմբերի 08-ի № 65-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 08-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ նոյեմբերի 08-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գույքագրման արդյունքները հաստատելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի արխիվացման ենթակա փաստաթղթերը ՀՀ ազգային արխիվ հանձնելու մասին:4) Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Լոռի Բերդ համայնքում իրականացվող ծրագրերի գծով արտոնություն տրամադրելու մասին

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրի անվանափոխության վերաբերյալ:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *Մարգարիտա Հովսեփյան*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ և 42-րդ կետերով և 77-րդ հոդվածի 3-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Լոռի Բերդ համայնքի գույքի կազմում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գույքագրման արդյունքները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԽԻՎԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *Անի Մարտիրոսյան*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և 36-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքապետարանի աշխատակազմի արխիվացման ենթակա փաստաթղթերը համաձայն՝ այդ նպատակով ձևավորված հանձնաժողովի սահմանած ցանկի՝ հանձնելու ՀՀ ազգային արխիվ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ՅԱՂԴԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ
ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. *Մարգարիտա Հովսեփյան*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով, հաշվի առնելով Լոռու մարզպետի 18.10.2024թ. թիվ 01/107.4/08505-2024 գրությամբ ներկայացված՝ ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 25-ի նիստի ընթացքում քննարկված «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի շրջանակում Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրի անվանափոխման վերաբերյալ հանձնաժողովի և ՀՀ Կադաստրի կոմիտեի առաջարկությունը, ինչպես նաև հիմք ընդունելով 04.11.2024թ. Յաղդան բնակավայրում իրականացված հանրային քննարկումների արդյունքները՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն չտալ՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրի անվանափոխության առաջարկի առնչությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *Անի Մարտիրոսյան*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2024 թվականի դեկտեմբերի 09-ը, ժամը՝ 12:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից: